Ջիվան Գասպարյան

Աշխարհահռչակ դուդուկահար, կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր



Ծնվել է 1928թ. Հայաստանի Սոլակ գյուղում: Շատ վաղ հասակում կորցրել է մորը, իսկ հորը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ զորակոչել են բանակ:

Մեծացել է որբանոցում: Դուդուկ սկսել է նվագել 6 տարեկանից, ինքնուրույն:

Երաժշտական գործունեության սկիզբը 1947թ. էր, երբ Մոսկվայի «Մեծ թատրոնի» բեմում հանդես եկավ հայկական սիրողական համույթի կազմում: Համերգին ներկա էր Ստալինը, ով ելույթի վերջում նրան նվիրել է «Պոբեդա» ժամացույց:

1949թ. ընդունվել է Թաթուլ Ալթունյանի անվան համույթ:

1956թ. դուդուկահարների մրցույթում ստացել է իր առաջին մրցանակը:

1959թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությամբ կազմակերպված միջազգային 4-րդ փառատոնում արժանացել է ոսկե մեդալի: Նույն փառատոնում մեդալների է արժանացել նաև 1962 և 1973թթ.:

1988թ. դուրս է եկել միջազգային ասպարեզ: Անգլիացի հայտնի երաժիշտ Բրայն Էնը Ջ. Գասպարյանին հրավիրել է Լոնդոն: Արվեստագետը շրջել է աշխարհով մեկ՝ ներկայացնելով հայկական ժողովրդական երաժշտությունը:

«Ես երբեք չեմ տխրի այս աշխարհում» վերնագրով առաջին ալբոմը նվիրված էր 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակին: 2-րդ «Սև ռոք» անվանումով ալբոմին հաջորդել են 15-ից ավելի այլ ձայնասկավառակներ:

Գրել է համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ֆիլմերի երաժշտություններ, ինչպիսիք են «Քրիստոսի վերջին չարչարանքները», «Գլադիատոր», «Ձյուն և մոխիր», «Սիրանա»:

2001թ. արժանացել է «Ոսկե գլոբուս» մրցանակի: